ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի /այսուհետ համալսարան, ԵՀ/ կողմից իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի /այսուհետ՝ ՄԿԾ/ մշակման, լրամշակման հաստատման, մշտադիտարկման և գնահատման գործընթացները:

1.2 Սույն կանոնակարգը բխում է բարձրագույն կրթությանն առնչվող ՀՀ օրենսդրության, ԵՀ կանոնադրության և այլ իրավական ակտերի դրույթներից:

1.3 Մասնագիտության կրթական ծրագիրը մշակվում կամ լրամշակվում է յուրաքանչյուր մասնագիտության և մասնագիտացման համար, որը ներառում է փոխկապակցված դասընթացների համախումբ՝ ապահովելու ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր դասընթացի ուսումնասիրության ավարտին ձեռք բերված կրթական վերջնարդյունքները միտված են ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

1.4 ՄԿԾ-ն պետք է համապատասխանի արտաքին (միջազգային, տեղական) և ներքին (բուհական) չափորոշիչների և/կամ կողմնորոշիչների պահանջներին, համահունչ լինի նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին՝ նպաստելու ուսանողների շարժունությանը ու ՄԿԾ-ների միջազգայնացմանը:

REGULATION ON DEGREE PROGRAM DEVELOPMENT, APPROVAL, MONITORING, EVALUATION AND REVIEW

1. GENERAL PROVISIONS

1.1. This regulation defines the processes of development, approval, monitoring and evaluation of the degree programs implemented by the European University of Armenia (hereinafter EU).

1.2. This regulation derives from the provisions of RA legislation, EU charter and other legal acts related to higher education.

1.3. The degree program is developed and amended for each specialty and specialization, which includes a set of interrelated courses to ensure the achievement of the learning outcomes of the program. This means that the learning outcomes achieved at the end of the study of each course are aimed at the achievement of the program learning outcomes.

1.4 The DP should meet the requirements of external (international, local) and internal (university) standards and/or orientations, be in line with degree programs of other similar recognized professions to promote student mobility and internationalization of DPs.

1.5 ՄԿԾ-երի մշակման, լրամշակման հաստատման, մշտադիտարկման, գնահատման, վերանայման, բարելավման գործընթացները միտված են.

ա) ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների համապատասխանությանը,

բ) կրթական բաղադրիչների և առանձին դասընթացների կրթական վերջնարդյունքների համապատասխանությանը ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքներին,

գ) դասավանդման և գնահատման մեթոդների ու ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների փոխկապակցմանը, հետևապես ՄԿԾ-ով նախանշված ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը,

դ) ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության ձևավորմանը և հիմնավորմանը:

1.5. The processes of developing, amending, approving, monitoring, evaluating and improving DPs are aimed at:

a) aligning learning outcomes of the DP with the characteristics of the RA NQF,

b) aligning educational components and the learning outcomes of individual courses with the learning outcomes of the DP,

c) correlating teaching and evaluation methods and the learning outcomes of the DP, and therefore achieving the expected learning outcomes outlined in the DP,

d) forming and justifying educational load expressed in credits for the achievement of the learning outcomes of the DP.

1.6 ՄԿԾ-ի մշակման և հաստատման գործընթացն իրականացվում է ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան (տե՛ս Հավելված 1.):

1.6 The process of developing and approving the DP is carried out in accordance with the schedule approved by the EU Vice-Rector for Academic and Scientific Affairs.

2. ՄԿԾ-ՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

2. THE DEVELOPMENT OF DPs

2.1 ՄԿԾ մշակելու կամ լրամշակելու նպատակով ԵՀ ռեկտորի հրամանով ձևավորվում է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվում են մասնագիտական ոլորտի դասախոսներն ու փորձագետները:

2.1 In order to develop and amend a new DP, a working group is formed by the order of the Rector, which includes professors and experts from the professional field.

2.2 Համապատասխան մասնագիտական ամբիոնի վարիչը հանդիսանում է աշխատանքային խմբի ղեկավար և պատասխա-

2.2 The head of the relevant Chair is the head of the working group and is responsible for the work of the group.

նատու է խմբի աշխատանքների համար:

2.3 Աշխատանքային խումբը հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմում և համապատասխան ամբիոնի քննարկմանն է ներկայացնում ՄԿԾ նախագիծը:

2.4 ՄԿԾ մշակման/լրամշակման և նախագծի ներկայացման ժամանակացույցը աշխատանքային խմբի ներկայացմամբ հաստատում է ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորը:

2.5 ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորը տրամադրում է խորհրդատվություններ ՄԿԾ մշակող/լրամշակող աշխատանքային խմբին՝ ՄԿԾ-ի հաստատման համար պահանջվող փաստաթղթերի նախապատրաստման և վերջնական փաթեթի կազմման վերաբերյալ:

2.6 ՄԿԾ-ի մշակման/լրամշակման համար ուղենիշներ են հանդիսանում.

ա) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջները,

բ) համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, կառույցների, ընկերակցությունների, միությունների, ոլորտը կարգավորող մարմինների պահանջներն ու ցուցումները,

գ) բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները,

դ) Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի (ԵԲԿՏ ՈՇ), Որակավորումների եվրոպական շրջանակի (ՈԵՇ) և Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) բնութագրիչները,

ե) հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները,

զ) արտասահմանյան և տեղական

2.3 The working group prepares and submits the new DP project to the relevant Chair for consideration in accordance with the approved schedule.

2.4 The schedule of the development of the DP and the presentation of the project is approved by the Vice-rector for Academic and Scientific Affairs at the presentation of the working group.

2.5 The EU Vice-rector for Academic and Scientific Affairs provides consultations to the working group developing and amending the DP regarding the preparation of the documents required for the approval of the DP and the compilation of the final package.

2.6 The following are guidelines for the development and amendment of the DP:

a) The requirements of the RA Law "On Higher and Postgraduate Professional Education",

b) requirements and instructions of relevant professional organizations, structures, associations, unions, regulatory bodies of the sector,

c) state educational standards of higher education,

d) Characteristics of the Qualifications Framework of the European Higher Education Area (EHEA), the European Qualifications Framework (EQF) and the National Qualifications Framework (NQF),

e) accreditation criteria and standards,

f) the results of comparative analysis of degree programs of similar specialties of leading foreign and local universities,

առաջավոր համալսարանների համանման մասնագիտությունների կրթական ծրագրերի համեմատական վերլուծության արդյունքները,

է) ԵՀ կրթական ծրագրերին ու դրանց իրականացմանն առնչվող նորմատիվ և այլ փաստաթղթերը:

g) Normative and other documents related to EU degree programs and their implementation.

2.7 ՄԿԾ-երի մշակումը/լրամշակումը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

1) ունենա հստակ և չափելի սահմանված նպատակ ու ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,

2) արտացոլված լինեն ներքին և արտաքին գործոնները,

3) հաշվի առնի ՄԿԾ-ի արտաքին /գործատուներ, շրջանավարտներ և այլն/ և ներքին /աշխատակազմ, ՊԴ կազմ, ուսումնառողներ/ շահառուների պահանջները,

4) հնարավորություն ընձեռնի շրջանավարտներին կարիերայի զարգացման,

5) արտացոլի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձևավորելու ու գնահատելու ձևերն ու մեթոդները, մարդկային ու նյութական ռեսուրսները:

2.7 The development and amendment of the DP should be based on the following principles:

1) have clear and measurable goals and expected educational outcomes,

2) reflect internal and external factors,

3) take into account the requirements of the external (employers, graduates, etc.) and internal (staff, students) stakeholders of the DP,

4) provide opportunities for career development for graduates,

5) reflect the ways and methods of forming and evaluating the expected learning outcomes, human and material resources.

2.8 Արդյունահեն ՄԿԾ-ների մշակման կամ լրամշակման, իրականացման ու որակի շարունակական բարելավման համար անհրաժեշտ են.

1) տվյալ կրթական մակարդակի (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա) և մասնագիտական ոլորտի համար որակավորումների եվրոպական, ազգային ու ոլորտային շրջանակների պահանջների ուսումնասիրություններ

2) ՄԿԾ-ի մասնագիտական ուղղվածության նկարագրություն՝ առաքելություն, նպատակներ, խնդիրներ,

2.8 In order to develop or amend, implement and continuously improve the quality of efficient DPs, it is necessary to have:

1) Studies of the requirements of the European, national and sectoral frameworks of qualifications for the given educational level (bachelor's, master's, postgraduate) and professional field

2) Description of the professional orientation of the DP: mission, goals, objectives, features

առանձնահատկություններ

3) ՄԿԾ-ի շահառուների (գործատուներ, ոլորտը կարգավորող մարմիններ և գերատեսչություններ, ուսանողներ, դիմորդներ, շրջանավարտներ, ծնողներ և այլն) կարիքների բացահայտում
4) ծրագրի ակադեմիական հիմնավորում՝ տվյալ ոլորտի մասնագիտական ու գիտակրթական հանրության հետ խորհրդատվության իրականացման միջոցով
5) ՄԿԾ-ի շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունների բացահայտում, սահմանում ու նկարագրություն
6) մարդկային, ենթակառուցվածքային, ֆինանսական, ուսումնաօժանդակ ռեսուրսների սահմանում
7) ծրագրի կրթական վերջնարդյունքների սահմանում՝ որակավորումների եվրոպական, ազգային ու ոլորտային շրջանակներին համահունչ
8) ՄԿԾ-ի կառուցվածքի ու բովանդակության ձևավորում
9) Դասավանդման և գնահատման մեթոդների ընտրություն՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքներին և բարձրագույն կրթության ոլորտի վերջին զարգացումներին համապատասխան
10) ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատելու ձևերի ու չափանիշների մշակում
11) ՄԿԾ-ի մշակման, դրա իրականացման արդյունավետության գնահատման, որակի ապահովման ու շարունակական բարելավման համակարգի ներդրում (ՊԻԳԲ որակի կա-

3) Identification of the needs of the beneficiaries of the DP (employers, industry regulatory bodies and departments, students, applicants, graduates, parents, etc.)
4) Academic grounds of the project through consultation with the professional and scientific community of the given field
5) Identifying, defining and describing the future career opportunities of the graduates of the DP
6) Definition of human, infrastructural, financial, educational resources
7) Defining the learning outcomes of the program in line with the European, national and sectoral frameworks of qualifications
8) Designing the structure and content of the DP
9) Selection of teaching and assessment methods in accordance with the expected learning outcomes and the latest developments in the field of higher education
10) Development of forms and criteria for assessing the achievement of the expected learning outcomes
11) Implementation of the system of development of the DP, evaluation of its implementation efficiency, quality assurance and continuous improvement with the use of feedback and forward communication mechanisms.

ռավարման սկզբունք) հետադարձ ու առաջանցիկ կապի մեխանիզմների կիրառմամբ:

3. ՄԿԾ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1 Տիտղոսաթերթ (տե՛ս Հավելված 2): Այն պետք է ներառի հետևյալ տվյալները.

1) համալսարանի անվանումը,
2) մասնագիտության անվանումը, դասիչը,
3) մասնագիտության կրթական ծրագրի անվանումը, դասիչը,
4) որակավորումը,
5) ՄԿԾ-ի իրականացման ժամանակահատվածը:

3.2 ՄԿԾ-ի ընդհանուր դրույթներ, որը ներառում է.

3.2.1 *ՄԿԾ-ի մշակման/լրամշակման հիմնավորումը,* որտեղ ներկայացվում է կրթական ծրագրի մշակման/լրամշակման անհրաժեշտությունը, արդիականությունը, ՄԿԾ-ի մշակման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,

3.2.2 *ՄԿԾ-ի ընդհանուր նկարագիրը,* որտեղ, հիմնվելով լիազոր մարմնի կողմից մասնագիտության լիցենզավորման փաստաթղթի, համալսարանի կանոնադրության ու ռազմավարական պլանի վրա, ներկայացվում է ուսուցման ձևը, ժամկետները, ուսուցման լեզուն, որակավորումների եվրոպական, ազգային և ոլորտային շրջանակների հետ համադրելությունը, ՄԿԾ-ի կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը և դրանց բաշխվածությունը ըստ կրթամասերի, ՄԿԾ-ի նպատակն ու խնդիրները: ՄԿԾ-ի նպատակը ակնկալվող արդյունքներն են և նկարագրում են այն մասնագիտական

3. THE STRUCTURE OF THE DP

3.1 Title page (see Appendix 2). It should include the following information:

1) name of the university,
2) the name of the profession,
3) the name of the degree program of the specialty, code,
4) qualification,
5) The period of implementation of the Degree program.

3.2 General provisions of the DP, which includes:

3.2.1 *The grounds for the development/amendment of the Degree program,* where the need for the development of the degree program, its relevance, the documents that are the basis for the development of the Degree program are presented,

3.2.2 *The general description of the Degree program*, where, based on the licensing document of the profession by the authorized body, the Charter and strategic plan of the university, the form of teaching, deadlines, the language of teaching, the alignment of program with the European, national and sectoral frameworks of qualifications, the load expressed by the credits of the Degree program and their distribution according to the blocks, the goals and objectives of the DPs are presented. The purpose of the DP is the expected learning outcomes and describes the professional qualities that students who

որակները, որոնք ձեռք են բերում ծրագիրն ավարտող ուսանողները: Նպատակների ձևակերպումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝ *զարգացնել, ապահովել, օժանդակել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, պատրաստել, նախապատրաստել, խթանել, աջակցել, տրամադրել և այլն:* ՄԿԾ-ի խնդիրները ցույց են տալիս, թե ինչ վերջնարդյունքներ է ակնկալվում ՄԿԾ-ի իրականացումից:

complete the program will acquire. The formulation of goals can be started with the following verbs*: develop, provide, assist, inform, introduce, form, prepare, prepare, promote, support, provide, etc.* The objectives of the DPs indicates what learning outcomes are expected from implementing the DP.

***3.2.3* ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները**: Այս բաժնում ներկայացվում են ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային (պրոֆեսորադասախոսական կազմ), ֆինանսական, կրթական, նյութատեխնիկական, ուսումնաօժանդակ և այլ ռեսուրսները:

3.2.3 Resources needed for the implementation of the DP. In this section, the human (academic staff), financial, educational, material and technical, supporting and other resources necessary for the implementation of the DP are presented.

3.3 ՄԿԾ-ի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագրերը: Այստեղ ներկայացվում են շրջանավարտի զբաղվածության հնարավոր ուղղությունները, մասնագիտական գործունեության շրջանակը և ձևերը, կարիերայի աճի և կրթությունը շարունակելու հնարավորությունները:

3.3 Characteristics of the professional activity of a graduate of the DP. Here are presented the possible directions of employment of the graduate, the scope and forms of professional activity, opportunities for career growth and continuing education.

3.4 ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները, դրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին և պետական կրթական չափորոշիչներին: Այս բաժնում գործող ՄԿԾ-ի ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծության, այլ ՄՈՒՀ-երի համանման կրթական ծրագրերի ուսումնասիրման, բենչմարքին-գի ու միջավայրային վերլուծության, շահառուների կարիքների վերլուծության, գործատուների կարծիքների ու գրախոսությունների, ուսանողների հարցումների հիման վրա սահմանվում են ՄԿԾ-ի ակնկալվող կրթական վերջնարդյունքները: ՄԿԾ-ի ակնկալվող կրթական վերջնարդյունքների

3.4 The DP Learning Outcomes, their compliance with the NQF and state educational standards. In this section, based on SWOT analysis of the current DP, study of similar degree programs of other Universities, benchmarking and environmental analysis, analysis of stakeholders' needs, employers' feedbacks and reviews, student surveys, the expected learning outcomes of the DP are defined. The correspondence of the expected learning outcomes of the DP to the NQF can be presented according to the provided template(see Appendix 3***)***.

համապատասխանությունը ՈԱՇ-ին կարելի է ներկայացնել ըստ ներկայացված ձևափաչի *(տե՛ս Հավելված 3):*

3.5 ՄԿԾ-ի քարտեզագրում: ՄԿԾ-ի նպատակներին ու կրթական վերջնարդյունքներին համապատասխան անհրաժեշտ է կառուցել ու լրացնել ծրագրի ուսումնական պլանի քարտեզը *(տե՛ս Հավելված 4):* Ուսումնական պլանի քարտեզը փաստաթուղթ է, որում արտացոլվում է, թե ինչ դասընթացների միջոցով է ծրագրի ուսումնական պլանն ապահովում ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները փոխկապակցված դասընթացների հետ: Ուսումնական պլանի քարտեզի ուղղահայաց սյուներում դասավորված են ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք պետք է ձևավորվեն տվյալ կրթական աստիճանի (բակալավրի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի) շրջանակներում, իսկ հորիզոնական տողերում՝ այն դասընթացները, որոնք կազմում են ծրագրի բովանդակությունը: Յուրաքան-չյուր կրթական վերջնարդյունքի ու այն ձևավորող դասընթացների (որոնց միջոցով ապահովվում է այդ վերջնարդյունքի ձեռքբերումը) հատման վանդակում դրվում է «X» նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ: ՄԿԾ-ի բովանդակությունը ձևավորելիս պետք է ծրագրում ներառել այնպիսի ուսումնական դասընթացներ և ուսուցման ձևեր, որոնք կնպաստեն ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևավորմանը, այսինքն՝ ծրագրի բոլոր կրթական վերջնարդյունքների համար պետք է ներառվեն այնպիսի դասընթաց-ներ, որոնք կապահովեն ուսանողների կողմից ՄԿԾ-ի

3.5 Mapping of the Degree program. It is necessary to build and complete the curriculum map of the program in accordance with the goals and learning outcomes of the Degree program (see Appendix 4). A curriculum map is a document that reflects through which courses the curriculum of the program ensures the achievement of the expected learning outcomes and how the learning outcomes of the Degree program are interconnected with the courses. The expected learning outcomes of the program are arranged in the vertical columns of the curriculum map, which must be formed within the framework of the given educational degree (Bachelor's, Master's, Postgraduate studies), and in the horizontal rows, the courses that make up the content of the program. An "X" is placed in the intersection of each learning outcome and the courses forming it (through which the achievement of this outcome is ensured), connecting them to each other. When designing the content of the Degree program, it should include such courses and teaching methods that will contribute to the formation of the expected learning outcomes of the program, that is, for all learning outcomes of the program, such included courses should ensure the successful achievement of the learning outcomes of the Degree program by students. To ensure the link between outcomes and courses, the learning outcomes of the courses should also be

վերջնարդյունքների հաջող ձեռքբերումը: Վերջնարդյունքների և դասընթացների միջև կապն ապահովելու համար պետք է հայտնի լինեն նաև դասընթացների կրթական վերջնարդյունք-ները (թեկուզ նախնական), որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե որ դասընթացը ծրագրի որ վերջնարդյունքի ձևավորմանն է նպաստում:

known (even if preliminary) so that it is possible to check which course contributes to which program outcome.

3.6 ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձևավորումն ըստ տարիների: Այս բաժնում ներկայացվում է թե ուսումնառողը ՄԿԾ վերջանրդյունքներից յուրաքանչյուրը որ տարում է ձեռք բերում (*տե՛ս Հավելված 5.)*

3.6 The formation of the final results of the DP by years. In this section, it is presented in which year the learner achieves each of the DP learning outcomes *(see Appendix 5.)*

3.7 Դասավանդման ու գնահատման մեթոդները: ՄԿԾ-ի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար կիրառվում են դասավանդման ու գնահատման մեթոդներ ու ձևեր *(տե՛ս Հավելված 6):* Մեթոդներն ընտրվում են այնպես, որ լավագույնս նպաստեն ուսանողների կողմից կրթական վերջ-նարդյունքների ձեռքբերմանը: Դասա-վանդման մեթոդները սահմանում են, թե ինչ է անում դասախոսը լսարանում (դասախոսություն է կարդում, վարում է գործնական կամ սեմինար պարապմունք, անցկացնում է քննարկում, կազմակերպում է լաբորատոր աշխատանք և այլն): Գնահատման մեթոդները ընտրվում են այնպես, որ գնահատման առաջադրանքում ուսանողները կարողանան լավագույնս դրսևորել/ցուցաբերել իրենց ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, իսկ դասախոսն արժանահավատ կերպով գնահատի/չափի ուսանողների կողմից այդ կրթական վերջնարդյունքների ձեռքբերման որակական մակարդակը: Գնահատման մեթոդներ են՝ գրավոր կամ բանավոր քննություն, կարճ պատասխաններ

3.7 Teaching and Assessment methods. Methods and forms of teaching and assessment are used to achieve the expected learning outcomes of the DP *(see Appendix 6)*. Methods are chosen to best contribute to the achievement of learning outcomes by students. Teaching methods define what the lecturer does in the classroom (lecturing, conducting a practical or seminar class, holding a discussion, organizing laboratory work, etc.).

Assessment methods are chosen in such a way that students can best demonstrate the learning outcomes they have achieved in the assessment task, and the lecturer can reliably assess/measure the qualitative level of the students' achievement of these learning outcomes. Assessment methods include: written or oral examination, short-answer questions, problem solving, tests, oral presentation, report, group or individual project, debate, role play, etc.

պահանջող հարցումներ, խնդիրների լուծում, թեստեր, բանավոր ներկայացում, զեկույց, խմբային կամ ինքնուրույն աշխատանք կամ նախագիծ, բանավեճ, դերախաղ և այլն:

3.8 ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների գնահատումը: ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների գնահատումն իրականացվում է համաձայն «ԵՀ ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի կիրառման» կարգին համապատասխան: Այստեղ ներկայացվում է, թե ինչ չափանիշներով, ձևերով, բաղադրիչներով և կշիռներով են գնահատվելու ուսանողների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

3.8 Assessment of the Degree program learning outcomes. The assessment of the DP learning outcomes is carried out according to the Procedure on " The Use of the EU Academic Credits Accumulation and Transfer System. Here it is presented in what ways and components the acquired knowledge, skills and abilities of the students will be assessed.

4. ՄԿԾ-Ի ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

4.1 ՄԿԾ-ների հաստատման գործընթացն իրականացվում է երկու փուլերով.

4.1.1 ՄԿԾ-ի նախագծի փորձաքննություն,

4.1.2 փորձաքննության եզրակացությունների հիման վրա ՄԿԾ-ի հաստատում:

4.2 ՄԿԾ-ն հաստատվում է ԵՀ գիտխորհրդի կողմից՝ համապատասխան ամբիոնի երաշխավորությամբ և փորձա-քննության եզրակացությունների հիման վրա:

4. APPROVAL OF THE DP

4.1 The process of approval of the DP is carried out in two stages:

4.1.1 Expertise of the project of the DP,

4.1.2 Approval of the DP based on the conclusions of the examination.

4.2 The DP is approved by the EU Scientific Council, with the guarantee of the relevant Chair and based on the conclusions of the examination.

5. ՄԿԾ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

5.1 ՄԿԾ-ի որակի ապահովումն իրականացվում է համապատասխան մասնագիտական ամբիոնի կողմից:

5.2 Համապատասխան մասնագիտական ամբիոնը ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկում է ՄԿԾ-ի առանձին դրույթներ՝ շարունակական բարելավման նպատակով:

5. QUALITY ASSURANCE, EVALUATION AND CONTINUOUS IMPROVEMENT OF THE DEGREE PROGRAM

5.1 The quality assurance of the DP is carried out by the relevant Chair.

5.2 The relevant professional Chair regularly discusses individual provisions of the DP in the Chair sessions for the purpose of continuous improvement.

5.3 Ամբիոնի վարիչը ՄԿԾ-ի որակի ապահովումն իրականացնում է տարեկան մշտադիտարկման, համեմատական վերլուծության (բենչմարքինգ), ՈՒԹՀՍ վերլուծության, դասալսումների, ներքին և արտաքին շահառուների հետ ֆոկուս-խմբային քննարկումների և այլ գործիքների միջոցով:

5.4 ՄԿԾ-ի գնահատման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամբիոնի վարիչն իրականացնում է կրթական վերջնարդյունքների և ուսումնական պլանի համապատասխանության, ուսանողների կողմից դասընթացների յուրացման մշտադիտարկումներ: ՄԿԾ-ի մշտադիտարկման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

5.5 Մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունն ամբիոնի երաշխավորությամբ ներկայացվում է ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորի հաստատմանը:

5.6 ՄԿԾ-ների շարունակական բարելավման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացվում է ՄԿԾ-ի համեմատական վերլուծություն ըստ ՄԿԾ-ների բաժինների:

5.7 Համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունն ամբիոնի երաշխավորությամբ ներկայացվում է ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորի հաստատմանը:

5.8 ՄԿԾ-ի բարելավման նպատակով անցկացվող ներքին և արտաքին շահառուների հետ իրականացվող քննարկումներն արձանագրվում են և պահվում համապատասխան ամբիոնում:

5.9 ՄԿԾ-ների որակի ապահովման նպատակով ամբիոնները համագործակ-

5.3 The Head of the Chair implements the quality assurance of the DP through annual monitoring, comparative analysis (benchmarking), SWOT analysis, lectures, focus group discussions with internal and external stakeholders and with the help of other tools.

5.4 At the end of each academic year, the The Head of the Chair carries out monitoring of learning outcomes and the compliance of the curriculum, assimilation of the courses by the students for the purpose of the evaluation of the DP. The results of the monitoring of the DP are discussed at the Chair sessions.

5.5 The report prepared on the basis of the results of the monitoring is submitted to the approval of the the EU Vice-Rector for Academic and Scientific Affairs with the guarantee of the Chair.

5.6 At the end of each academic year, a comparative analysis of the DP is carried out for the purpose of continuous improvement of the DPs.

5.7 The report prepared on the basis of the results of the comparative analysis is submitted to the approval of the the EU Vice-Rector for Academic and Scientific Affairs with the guarantee of the Chair.

5.8 Discussions conducted with internal and external stakeholders for the purpose of improving the DP are recorded and kept in the relevant forum.

5.9 In order to ensure the quality of DPs, the chairs cooperate with the Quality

ցում են ԵՀ որակի ապահովման դեպարտամենտի հետ՝ հարցումների, խորքային հարցազրույցների իրականացման, խորհրդատվությունների, մեթոդական ցուցումների, ներամբիոնային որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացմանն այլ նպատակներով:

Assurance Department of the EU for the effective implementation of surveys, in-depth interviews, consultations, methodological instructions, internal quality assurance processes for other purposes.

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում ԵՀ գիտխորհրդի հաստատման և հրապարակման պահից:

6.2 Հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարբերության առկայության պարագայում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. FINAL PROVISIONS

6.1 This regulation enters into force from the moment of approval and publication by the EU Scientific Council.

6.16.2 In case of a difference between the Armenian and English versions, the priority is given to the Armenian version.

Հավելված 1/ Appendix 1

Հաստատում եմ՝
ԵՀ ուսումնագիտական
գծով պրոռեկտոր
Անուն, Ազգանուն

_____
Ստորագրություն

«___» _____ 20__թ.

Approved by
EU Vice-Rector for Educational and Scientific Affairs

_____
(signature)

«____»_____ 20__թ.

ՄԿԾ մշակման և հաստատման գործընթացի իրականացման ժամանակացույց/
Timeline for the Implementation of Professional Degree program Development and Approval Process

Հ/Հ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ/ ACTION	ՍԿԻԶԲ/ BEGINNING	ԱՎԱՐՏ/ END
1.	Հայտի ներկայացում և հաստատում/ Application submission and approval		
2.	Աշխատանքային խմբի ձևավորում և հաստատում/ Formation and approval of the working group		
3.	Աշխատաշուկայի վերլուծության իրականացում և հաշվետվության ներկայացում/ Conducting labor market analysis and reporting		
4.	Շահառուների կարիքների վերլուծության իրականացում և հաշվետվության ներկայացում/ Conducting and reporting on stakeholder needs analysis		
5.	Համեմատական վերլուծության իրականացում և հաշվետվության ներկայացում/ Conducting benchmarking and reporting		

6.	ՄԿԾ նախագծի պատրաստում և ներկայացում/ Preparation and presentation of the Degree program Project		
7.	ՄԿԾ նախագծի քննարկումներ շահառուների հետ/ Discussions with the stakeholders of the Degree program Project		
8.	ՄԿԾ նախագծի քննարկում համապատասխան ամբիոնում և երաշխավորում/ Discussion of the project of the Professional Degree program in the relevant chair and guarantee		
9.	Փորձաքննության իրականացում և գրախոսության ներկայացում/ Implementation of examination and submission of review		
10	Փորձաքննության արդյունքների քննարկում, ՄԿԾ վերջնականացում/ Discussion of the results of the examination, finalization of the Professional Degree program		
11.	ՄԿԾ հաստատում/ Professional Degree program Approval		

Հավելված 2

Հաստատված է ԵՀ Գիտական խորհրդի
«___» _____ 20__թ. թիվ __ նիստի որոշմամբ,
ԵՀ ռեկտոր՝ _____ Հ. Բիշարյան (11 pt.)
ստորագրություն

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ(16 pt, Bold)

_____ «_____» **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (16 pt., Bold)**

դասիչը

_____ «_____» **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ(16 pt, Bold)**

Որակավորում՝ _____բակալավր(16 pt, Bold)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (16 pt, Bold)
և20-- -20_թթ.(16 pt, Bold)

ԵՐԵՎԱՆ 20__(11 pt.)

Appendix 2

Approved by the EU Scientific Board
on <<___ >>_____ 20_, in the EU Scientific Board by the decision of session No. __
EU Rector: H. Bisharyan (11 pt.)

_____
signature

EUROPEAN UNIVERSITY (16 pt, Bold)

_____ «_____» SPECIALTY (16 pt., Bold)

_____ «_____» DEGREE PROGRAM(16 pt, Bold)
QUALIFICATION _____Bachelor (16 pt, Bold)

DEGREE PROGRAM (16 pt, Bold)
20-- -20_ (16 pt, Bold)

YEREVAN 20__(11 pt.)

Հավելված / *Appendix 3*

«————————————————————» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈԱՇ-Ի ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻՆ/

CORRESPONDENCE OF EXPECTED PROFESSIONAL LEARNING OUTCOMES WITH THE DESCRIPTORS OF NQF

ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքներ/ Learning Outcomes of Degree program	**ՈԱՇ-ի բնութագրիչներ/DESCRIPTORS OF NQF**										ՄԿԾ-ի վերջնարդյունքների գնահատման մեթոդ/ A method for evaluating the final results of the Degree program.
	Բնութագրիչ 1 Մասնագիտ. աշխատանքի կամ ուսումառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ/ Descriptors 1. Professional field of work or study knowledge and advanced knowledge of modern and fundamental concepts, theories and methods	Բնութագրիչ 2. Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական ու առաջադեմ մոտեցումներ և անհրաժեշտ են ձեռք բերած գիտելիքը և իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս:/ Descriptors 2. Skills that demonstrate innovative and advanced approaches and need the acquired knowledge and expertise in solving unforeseen problems arising in professional work or studies.	Բնութագրիչ 3. Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու հմտություններ:/ Descriptors 3. Skills to present and explain information, arguments, ideas, problems and their solutions related to the given field to the professional and non-professional public.	Բնութագրիչ 4. Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու համար ՏՀՏ-ներ կիրառելու հմտություններ:/ Descriptors 4. Skills to use ICT to solve problems and facilitate work in the professional field.	Բնութագրիչ 5. Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:/ Descriptors 5. Skills in collecting, processing, analyzing and interpreting quantitative and qualitative data relevant to the professional field to make judgments	Բնութագրիչ 6. Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ՝ դրսևորելով քննադատական մտածողություն:/ Descriptors 6. Analytical and reasoning skills, demonstrating critical thinking	Բնութագրիչ 7. Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելիս և տարբեր լուծումներ առաջադրելիս:/ Descriptors 7. Skills that require a creative approach in identifying professional problems in the field and proposing different solutions.	Բնութագրիչ 8. Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն:/ Descriptors 8. To carry out a full professional activity	Բնութագրիչ 9. Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար:/ Descriptors 9. Manage professional functions and programs in an unpredictable work or learning	Բնութագրիչ 10. Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:/ Descriptors 10. To realize the personal responsibility towards the nation and the state, to pursue the implementation of democratic principles, the spread of national and universal values	

									environment, take responsibility for the professional development of individuals or a team		
ՈՒԱ 1. հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների նվազագույն մակարդակով շրջանակի ձևավորում/ Learning Outcome 1. Formation of a framework with a minimum level of	√									√	թեստերի կիրառում, գրավոր աշխատանքներ, հարցում՝ խմբային պրեզենտացիոն սլայդներով/ usage of tests, written works, questionnaires with group presentation slides

humanitarian and socio-economic knowledge											
ՈՒԱ 2. կառավարման ոլորտում մաթեմատիկական և բնագիտության առանցքային հիմնադրույթների գիտելիքների նվազագույն շրջանակի ձևավորում/ Learning Outcome 2. Formation of the minimum framework of knowledge of the key foundations of mathematics and science in the field of management/	√										թեստեր, խնդիրներ, գրավոր ստուգում, բանավոր հարցումներ/ Tests, written checkups and oral inquiries

Հավելված / Appendix 4

---------- ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ/ CURRICULUM MAPPING OF THE DEGREE PROGRAM

----------ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների (ՎԱ) համապատասխանությունը /քարտեզագրում/ (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյուները)/ Compliance of the courses and the expected learning outcomes provided by the Degree program(add rows and columns if necessary)																						
	Ուսումնառության վերջնարդյունքները Դասընթացի անվանումը /առարկայացանկ/ Learning Outcomes Name of the Course: /Table of Contents/	ՎԱ/LO 1	ՎԱ/LO 2	ՎԱ/LO 3	ՎԱ/LO 4	ՎԱ/LO 5	ՎԱ/LO 6	ՎԱ/LO 7	ՎԱ /LO 8	ՎԱ /LO 9	ՎԱ/LO 10	ՎԱ;O 11	ՎԱ/LO 12	ՎԱ/LO 13	ՎԱ/LO 14	ՎԱ/LO 15	ՎԱ /LO16	ՎԱ/LO 17	ՎԱ/LO 18	ՎԱ /LO 19	ՎԱ/LO 20	ՎԱ /LO21
		Գիտելիքներ/ Knowledge				Հմտություններ/ Skills								Կարողություններ/ Abilities								
1.		x				x												x				
2.		x				x												x				
3.		x				x												x				
4.		x				x												x				
5.			x		x					x								x	x			
6.					x						x									x		

Հավելված / Appendix 5

4.ՄԿԾ-Ի ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ/ DEVELOPMENT OF LEARNING OUTCOMES OF THE DP ACCORDING TO THE YEARS

	Գիտելիք/Knowledge	**Հմտություն/Skills**	**Կարողություն/Abilities**
1-ին կուրս Year 1			
2-րդ կուրս Year 2			
3-րդ կուրս Year 3			
4-րդ կուրս Year 4			

4.ՄԿԾ-Ի ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ/ MEASUREMENT AND EVALUATION OF DP LEARNING OUTCOMES

Վերջնարդյունքներ/ Learning Outcomes	Դասավանդման մեթոդ/ Teaching Method	Գնահատման մեթոդ/ Assessment Method